

նուէր ի պատիւ Ս. Յովհաննու կառուցուած եկեղեցիի մը մէջ: Այս շփոթութեան մէջ կը պարզուի Աշակերտարանի եկեղեցիին նոր սրբազայրի մը Հայր մերի եկեղեցիին փոխուելուն: Շնացեալ կնոջ դէպքը կը սկսի Յիսուսի Զիթենեաց լեռը քաշուելուն համար. բայց ան առաւօտուն տաճար զնաց: Արձանագրութիւնը չէ ան, ինչ որ կը կարծէ պարզամիտ Բեռնարգոս կամ իր առաջնորդը, այլ ան կը պարունակի «Հայր մեր»ը կամ Տերունակաւ Աղօթքը զոր մեր փրկիչը իր մասներովը մարտարի վրայ գրած էր» (Ք. Ք. V. A. հատ. Բ. էջ 397):

Յովհաննէս եպօ. Երուսաղէմացի կը գրէ «Հայր մեր»ի եկեղեցիի մասին. «Յառաջագոյն մեծ եկեղեցի էր սա, որպէս եւ քարինք որմոյն տակաւին տեսանին: Աստ ասի ևս թէ Քրիստոս եկեր զխորիսիս մեզուն յաւուր համբարձմանն:

Մերձ սորա գոյ սիւն մի՝ ուր Քրիստոս օրհնեաց զառաքեալսն և մեկնեցաւ ի նոցանէ և վերանայր յերկինս» (Հան. էջ 275):

Համբարձման եկեղեցիէն քսան և ութը քայլ հեռու մատուռ մը կար ուր կը գտնուէր այն քարը՝ որուն վրայ մեր Տէրը կը նստէր երբ կը քարոզէր ութը երանութիւնները (Է. Դ. Ք. էջ 177):

5. Բլրի եկեղեցին եւ Գուրակաւ փոշին (Է. դար). — Զիթենեաց լեռան յորի եկեղեցին տանիք կամ կամար չունէր, բոլորովին բաց էր, ամէնուն տեսանելի ընելու համար երկինքի ճանապարհը(*): Բայց տանի-

(*) Արգուլժ եպօ.ի ըսածին նայելով՝ այս եկեղեցին շրջանակաձեւ էր եւ գաւիթը սիւնազարդ: